ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1961 Общественные науки

Ե. Ղ. Սարգսյան· Ռ. Գ. Սահակյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՖԱԼՍԻՖԻԿԱՑԻԱՆ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վերջին տարիների ընթացքում Թուրքիայում նոր և հատկապես նորագույն պատմության հարցերի վերաբերյալ լույս տեսնող գրականության հիմնական ուղղությունը թուրքիզմն է (türkçülük), *որը նպատակ ունի իդեալականացնել Թուրքիայի պատմությունը, ամեն կերպ գունազարդել այն՝ կանգ չառնելով հանրահայտ փաստերի, պատմական իրականության բացահայտ աղավաղման և ուղղակի ֆալսիֆիկացիայի առաջ։ Թուրքիզմը կոչված է գովերգելու թուրք ազգի «առանձնահատուկ դերը» մարդկային հասարակության պատմության ու համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում, դրանով իսկ փորձելով արդարացնել ինչպես անցյալում սուլթանական բռնապետության լծի տակ ընկած ժողովուրդների, այնպես էլ ժամանակակից Թուրքիայի՝ ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած վայրագ, շովինիստական քաղաքականությունը։*

Թուրք պատմաբանները անցյալի քաղաքական ու ռազմական մոլի հետադիմական թուրք գործիչներին նվիրում են հատուկ «հետազոտություններ», ճգնելով նրանց ներկայացնել որպես պատմության մեջ «մեծ» դեր խաղացած ականավոր մարդկանց։

Վերջին երկու տասնամյակում Թուրքիայում առանձին գրքերով հրատարակվեցին շովինիստ-ջարդարարներ, հայ ժողովրդի դահիճներ Թալաաթ փաշայի[1], *Քյազըմ Կարաբեքիրի*[2], *Ալի Ֆուաթ փաշայի (Ջեբեսոյ)* [3] *և մյուսների հուշերը՝ գովերգող առաջաբաններով, իսկ վերջերս սկսել են լույս տեսնել նրանց նվիրված առանձին աշխատություններ՝ «Մոտիկ անցյալի պատմության անհայտ էջերը»* (Yakın tarihin meçhul sahifeleri) *սերիայով։*

Հատկանշական է, որ հիշյալ հրատարակություններում հեղինակները անդրադառնում են Թուրքիայի 1920-ական թվականների սկզբի ազգային-ազատագրական պայքարի, Սովետական Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի փոխհարաբերությունների, քեմալականների դեպի Անդրկովկաս կատարած արշավանքի և մի շարք այլ հարցերին։

Այսպես, ժամանակակից թուրք պատմաբաններից Ջեմալ Քութայը արդեն լույս է ընծայել առանձին գրքույկներ Թալաաթի[4], *Էնվեր փաշայի*[5], *Քյազըմ*

---

[1] Talât paşanın hatıraları. Istanbul, 1946.

[2] Karabekir, Kazım, Cihan harbine neden girdik, nasıl girdik, nasıl idare ettik. Kitap I—II. Istanbul, 1937—1938.

[3] General Ali Fuat Cebesoy, Millî mücadele hatıraları. Istanbul, 1953.
General Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları. Istanbul, 1955.
General Ali Fuat Cebesoy, Sivas hatıraları. Istanbul, 1957.

[4] Cemal Kutay, Talat paşayı nasıl vurdular? Istanbul, 1956.

[5] Cemal Kutay, Enver paşa hadiseleri. Istanbul, 1956.

Կարաբեքիրի[6] պետական և ռազմական գործունեության մասին, որոնց մեջ շոշափվում են վերը թվարկված հարցերը։

Սույն հոդվածի շրջանակները հնարավորություն չեն ընձեռում մեզ՝ հանդամանորեն վերլուծելու նշված սերիայի բոլոր հրատարակություններում, ինչպես նաև թուրք, այլ հեղինակների աշխատություններում արծարծվող հարցերը։ Հոդվածի նպատակն է անդրադառնալ վերջին տարիների ընթացքում լույս տեսած թուրք պատմաբանների այն աշխատություններին, որոնցում բարձրացվում և խիստ միտումնավոր ու աղավաղված ձևով են ներկայացվում Սովետական Ռուսաստանի, Հայաստանի ու քեմալական Թուրքիայի 1920 թվականի փոխհարաբերությունների մի քանի կարևոր հարցերը։

* * *

1956 թ. Ստամբուլում լույս տեսավ թուրք պատմաբան Ջեմալ Քութայի «Ինչպե՞ս Կարաբեքիրը ոչնչացրեց Հայաստանը»[7] թունոտ վերնագիրը կրող գրքույկը, որում քննարկվող հարցերի շարադրանքի ոգին ու հետապնդվող նպատակները բնորոշ են նաև մյուս թուրք հեղինակների գործերի համար։ Այս «հետազոտության» հեղինակը իր ընտրած «հերոսին» փառաբանելու առիթով մեջ է բերում մի շարք մինչ այժմ մեզ անհայտ փաստեր, որոնք բացահայտում են Թալաաթի, Կարաբեքիրի և մյուսների հանցավոր գործողությունները հայ ժողովրդի նկատմամբ։

Հայտնի է, որ երիտասարդ թուրքերի զավթողական պլաններն Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ձախողվեցին ռուսական բանակի ջախջախիչ հարվածների ներքո։ Սակայն դրանցից չհրաժարվեցին Օսմանյան կայսրության փլատակների վրա բարձրացած Թուրքիայի ղեկավար շրջանները։

Դեռևս 1920 թ. սկզբին, Մուստաֆա Քեմալի կողմից գլխավորվող ներկայացուցչական կոմիտեի արձանագրություններից մեկում ընդունված էր հետևյալ որոշումը. «Արևելյան ճակատում անցկացնել պաշտոնական կամ ոչ պաշտոնական զորահավաք և սկսել զորքերի կենտրոնացումը՝ թիկունքից կովկասյան արգելքը ոչնչացնելու համար»[8]։ Ուստի պատահական չէ, որ հետագայում, երբ հունական բանակը ընդհուպ մոտեցել էր Անկարային, նոր Թուրքիայի ղեկավարները, նույնիսկ իրենց համար այս ծանր օրերին նվաճողական ձգտումներով տարված, հիմնական ուժերը կենտրոնացրել էին Արևելյան ճակատում՝ Անդրկովկասի սահմանների մոտ, սպասելով, ինչպես խոստովանում է Կարաբեքիրը, «ամենահարմար ժամանակի»[9], հարձակման անցնելու համար։ Բավական է նշել, որ Ինենյուի առաջին ճակատամարտի ժամանակ 60 հազարանոց հունական բանակի դեմ թուրքերը դուրս էին բերել ընդամենը 15 հազար զորք այն դեպքում, երբ Արևելյան ճակատում 30 հազարանոց հայկական զորքի դեմ քեմալականները դուրս էին բերել 50 հազարանոց բանակ։

Օսմանյան կայսրությունը խայտառակ պարտության հասցրած տխրահռչակ էնվերն ու Թալաաթը, որոնք ծպտյալ ապաստարան էին գտել Բեռլինում.

---

[6] Cemal Kutay, Karabekir Ermenistanı nasıl yok etti? Istanbul, 1956.

[7] Նույն տեղում։

[8] Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 3, стр. 313, М., 1934.

[9] Cemal Kutay, Նշվ. աշխ., էջ 36։

քաջ տեղյակ էին այդ պլանների մասին և անգամ խորհուրդներ էին տալիս նոր Թուրքիայի ղեկավարներին՝ նրանց դիտելով որպես իրենց ձախողված դավթողական քաղաքականության շարունակողների։

«Թանկագին իմ Կարաբեքիր փաշա,—Բեռլինից գրում էր իր նամակում Թալաաթը,—եթե ռազմական պատրաստություններդ լրիվ են, անցիր հարձակման։ Կասկած չկա, որ Արևելքում ձեռք բերվելիք հաղթանակը Արևմտյան ճակատի և ամբողջ աշխարհի վրա խորին մի հետք կթողնի» (ընդգծումը մերն է—Ե. Ս., Ռ. Ս.)[10]։

Ավելորդ չէ նշել, որ Թալաաթը, նախքան Կարաբեքիրին գրելը, երկար զրույց էր ունեցել այդ ժամանակ նույնպես Բեռլինում գտնվող էնվերի հետ՝ «Հայաստանի դեմ նախապատրաստվող հարձակման» շուրջ և լրիվ հավանություն էր ստացել վերջինիս կողմից[11]։

Նույն հեղինակի պարծենկոտ հայտարարությունից պարզվում է, որ «դեռևս գարնան ամիսներին Կարաբեքիրը լրիվ ավարտել էր ուժերի միավորումը և զինումը հայերի դեմ հարձակվելու համար»[12]։

Պետք է ասել, որ ազգայնականների ագրեսիվ այս նպատակները իրենց առաջին արտահայտությունը գտան դեռևս 1919 թվականին, Էրզրումի և Սվազի կոնգրեսներում։ Այնուհետև, այդ հարցը քննարկման առարկա է դարձել Անկարայում գումարված Թուրքիայի Ազգային Մեծ ժողովում։ Այդ մասին են վկայում նորահայտ արխիվային փաստաթղթերը, որոնցից մեկում ասված է, որ Անկարայում հաճախ տեղի ունեցող Ազգային Մեծ ժողովի նիստերում՝ մասնակցությամբ Կոստանդնուպոլսի կառավարության ներկայացուցիչների, լսվում էր ամբողջ Կովկասի գրավման հարցը և այդ ուղղությամբ կոնկրետ միջոցառումների էին դիմում, լրտեսներ ուղարկելով Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս[13]։

Կովկասում իր զավթողական պլաններն իրականացնելու նպատակով Անկարայի կառավարությունը որոշել էր առաջին հերթին գրավել Արևելյան Հայաստանը։ Այդ նպատակի հաջող իրագործման համար Արևելյան ճակատի հրամանատար նշանակվեց Քյազրմ Կարաբեքիր փաշան, որը դեռևս համաշխարհային պատերազմի տարիներին աչքի էր ընկել իր հայաջինջ գործողություններով։ Թուրք պատմաբան Հիքմեթ Բայուրը «Թուրքական Ռեսպուբլիկայի արտաքին քաղաքականությունը» վերնագիրը կրող իր գրքում խոստովանում է, որ Անկարայի կառավարությունը վաղուց էր պատրաստվում Հայաստանի վրա հարձակվելու, սակայն Անդրկովկասից անգլիական զորքերի էվակուացիայի ուշացումը Թուրքերին ստիպեց որոշ ժամանակ սպասելու։ «Չնայած դրան,—գրում է այնուհետև Բայուրը,—երկրի արևելյան մասում մենք ավարտեցինք զորահավաքը և նախապատրաստեցինք Արևելյան ճակատի ստեղծումը»[14]։

Ինքը Մուստաֆա Քեմալը 1920 թվականի օգոստոսի 14-ի իր ճառում ընդգծել է, որ «Ազգային Մեծ ժողովը երեք վիլայեթների (խոսքը Կարսի, Բաթումի

---

[10] Cemal Kutay, Նշվ. աշխ., էջ 27։

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 25—26։

[12] Նույն տեղում, էջ 36։

[13] ЦГАКА, ф. 109, оп. 3, д. 298, л. 28.

[14] Ord. prof. Yusuf Hikmet Bayur, Türkiye devletinin dış siyasası. Istanbul, 1938, s. 75.

և Արդահանի մասնի է—Ե. Ս., Ռ. Ս.) հարցի կապակցությամբ լիազորել ՀՍ Մինիստրների Խորհրդին օկուպացնել դրանք, հենց որ հնարավորություն ստեղծվի»։ «Այսպիսով,—շարունակում է Քեմալը,—հունիսի 6-ին մեր կողմից Արևելյան բանակին հրաման տրվեց պատրաստվել հարձակման»[15]։

Այսպես ուրեմն, դեռևս 1920 թ. հունիսին, երբ հունական զորքերը ձեռնարկել էին մեծ առաջխաղացում Թրակիայում ու Անատոլիայում, գրավելով Ադրիանապոլիսը, Էրեգլին, Բրուսան, Բալըքեսիրը և մի քանի այլ քաղաքներ, Անկարայի կառավարությունը Արևելյան ճակատում, Հայաստանի սահմանի վրա էր կենտրոնացրել իր հիմնական ուժերը։ Այդ մասին այժմ բացեիբաց գրում են նաև մի շարք այլ Թուրք հեղինակներ՝ և՛ պրոֆեսոր Էնվեր Զիյա Կարալը[16], և՛ մոլի հետադիմական, գեներալ Ալի Ֆուաթ Ջեբեսոյը[17], և՛ Թուրքիայի զինվորական դպրոցներից մեկում քաղաքական պատմություն ավանդող Թահսին Յունալը[18] և ուրիշներ։

Այս աներկիմաստ խոստովանությունները, ինչպես նաև ազգային-ազատագրական պայքարի հենց սկզբնական շրջանից քեմալականների վարած քաղաքականությունը գալիս են հաստատելու այն միտքը, որ քեմալական շարժումը իր ծագման իսկ օրից ունեցավ Թուրքիայի ազգային բուրժուազիային բնորոշող մի առանձնահատկություն. մի կողմից այն հակաիմպերիալիստական էր ու ազգային-ազատագրական՝ ուղղված արևմտյան իմպերիալիզմի դեմ, իսկ մյուս կողմից՝ այդ շարժումն ընդունեց նվաճողական, իմպերիալիստական բնույթ Թուրքիային հարևան Անդրկովկասի ու նրա ժողովուրդների նկատմամբ։ Եվ այդ զավթողական բնույթը Թուրք հեղինակները հրամցնում են որպես Թուրքիայի ազգային-ազատագրական շարժման բաղկացուցիչ մասը։ Դեռ ավելին։ Թուրքական ագրեսիայի հետևանքով 1920 թվականի հայ-Թուրքական պատերազմում ձեռք բերած հաղթանակը Թուրք հեղինակները համարում են «անկախության համար մղված իրենց պայքարի առաջին հաղթանակը»[19], նրա հետ կապելով ազգային-ազատագրական պայքարի հետագա ճակատագիրը։

«Եթե Կարաբեքիրը Արևելքում հաղթանակ չտաներ, ի՞նչ կլիներ ազգային կռվի բախտը»,—գրում է Ջեմալ Քութայը[20]։

Սակայն քեմալականների ագրեսիան նպատակ չուներ միայն Անդրկովկասը նվաճելու։ Այն միաժամանակ ուղղված էր Սովետական Ռուսաստանի դեմ և կրում էր վատ քողարկված հակասովետական բնույթ։ Վ. Ի. Լենինը 1920 թ. հոկտեմբերի 9-ին ռեսպուբլիկայի ներքին և արտաքին դրության մասին իր զեկուցման մեջ նշելով, որ Թուրքեստանում ու Կովկասում դրությունն ավելի բարդ է, եզրակացնում էր, որ քեմալականները, հավանական է, չեն բավարարվի Հայաստանի նվաճումով։ «Վերջերս Թուրքերը սկսեցին

---

[15] Atatürkün soylev ve demeçleri. Cilt I. T. B. M. Meclisinde ve C. H. P. Kurultaylarında (1919—1938), Istanbul, 1945, s. 90.

[16] Prof. Enver Ziya Karal, Türkiye Cumhuriyeti tarihi (1918—1953), Istanbul, 1958, s. 97.

[17] General Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları. Istanbul, 1955, s. 61.

[18] Tahsin Ünal, 1700 den 1958e kadar Türk siyasi tarih. Ankara, 1958, s. 270.

[19] Enver Ziya Karal, Նշվ. աշխ., էջ 98։

[20] Cemal Kutay, Նշվ. աշխ., էջ 62։

հարձակումը Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ այնուհետև, հնարավոր է, և Բաքուն»[21]։

Թուրք հեղինակները պատմական իրականության, փաստերի նենգափոխումը հասցրել են այն աստիճանի, որ իրենց ագրեսիվ գործողությունները և ուրիշի տերիտորիայի նվաճումը դիտում են որպես «ներդրում» Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակի գործում։ Այսպես, Թեվֆիք Բըյրքլըօղլուն Թուրքական պատմության Ընկերության կողմից հրատարակվող «Բելլեթեն» ամսագրի 1961 թվականի հուլիսյան համարում գրում է.

«Սովետական Ռուսաստանի ներքին կռիվներով ու Լեհաստանի դեմ պատերազմով խիստ զբաղված լինելու ժամանակամիջոցին Կովկասում՝ Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում նրա ուժերը թույլ ու քայքայված էին և այդ պետությունների ու ժողովուրդների սովետականացումը այս ճակատում հնարավոր էր դարձել միայն թուրքական օգնության շնորհիվ»[22] (ընդգծումը մերն է—Ե. Ա., Ռ. Ա.)։

Սակայն ինչո՞ւմն էր կայանում քեմալական Թուրքիայի «օգնությունը»։ Արդյոք նրանո՞ւմ, որ 1920 թ. թուրքական արշավանքը Անդրկովկասում բազմաթիվ աղետներ ու տասնյակ հազարավոր նոր զոհեր պատճառեց նրա ժողովուրդներին և առաջին հերթին հայ ժողովրդին։ Ո՞ւմ հայտնի չէ, որ միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումը հայ ժողովրդին փրկեց թուրքերի ծրագրած բնաջնջումից։

Թուրք հեղինակների այս ֆալսիֆիկացիան ունի իր արմատները։ Դեռ այն ժամանակ, երբ թուրքական հորդաները ներխուժել էին Հայաստանի տերիտորիան՝ շարժվելով դեպի երկրի խորքը, հրի ու սրի մատնելով գյուղերն ու քաղաքները, ոչնչացնելով խաղաղ բնակչությունը, Թուրքիայի ղեկավարները լկտիորեն հայտարարում էին, որ Անկարայի կառավարության զորքերը իրենց սվիններով հետ բերում են ոչ թե բռնություն, այլ ազատագրում դաշնակների լծից։ Քյազրիմ Կարաբեքիրը թուրքական բանակի հարձակման նախօրյակին հատուկ կոչ արձակեց Հայաստանի բնակչությանը, որի մեջ ասվում էր, որ «քեմալականների հարձակման նպատակն է փրկել ինչպես քրիստոնեական, այնպես էլ մահմեդական ճնշված բնակչությունը դաշնակներից»[23]։ Իսկ Թիֆլիսում Անկարայի կառավարության ներկայացուցիչ Քյազրիմ բեյը Հայաստանի գրաված շրջանները թուրքական զորքերի կողմից ավերելուց, բնակչությունը ոչնչացնելուց հետո ցինիկաբար հայտարարեց. «Մենք հեռու ենք Հայաստանը ոչնչացնելու մտքից և ցանկանում ենք ինքնուրույն դեմոկրատական Հայաստան։ Հայաստանը կհաստատի, որ ոչ մի դաժանություն չի եղել մեր կողմից օկուպացված շրջաններում»[24]։

Թուրք ֆալսիֆիկատորները դեպի Հայաստան կատարած ագրեսիան արդարացնելու համար դիմում են մի ուրիշ խարդախ միջոցի՝ փորձում են գործն

---

[21] В. И. Ленин, Доклад о внутреннем и внешнем положении республики на совещании актива Московской организации РКП(б) 9 октября 1920 года. «Ленинский сборник», XXXVI, стр. 131, Госполитиздат, М., 1959.

[22] Türk Tarih Kurumu, Belleten, Cilt XXV, Temmuz, 1961, sayı 99, s. 488.

[23] Центральный Партийный архив Института марксизма-ленинизма при ЦК КПСС, ф. 85, оп. 14, д. 21, л. 1.

[24] Там же, д. 29, л. 5.

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

այնպես ներկայացնել, որ իբր Սովետական Ռուսաստանի կառավարությունը լոելյայն հավանություն էր տալիս Թուրքիայի ագրեսիվ գործողություններին։

Թալաաթ փաշան Բեռլինից Կարաբեքիրին գրած վերոհիշյալ նամակում վերջինիս ռազմամոլ ու հայատյաց ձգտումները խրախուսելու նպատակով «հավաստիացնում էր» նրան, որ սովետական ղեկավարները չեն միջամտի և որևէ ձևով չեն խոչընդոտի թուրքական զորքերի առաջխաղացմանը Հայաստանում։

«Նշանակություն մի՛ տուր այն բանին, որ բոլշևիկները էապես կարող են հովանավորել Հայաստանին»,—գրում էր նա[25]։

Քաջ հայտնի է սակայն, որ թուրքական բանակի Հայաստանի վրա հունիսամսին նախատեսվող հարձակումը հետաձգվեց հենց Սովետական Ռուսաստանի կառավարության միջամտության շնորհիվ։ ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինի 1920 թ. հունիսի 3-ի նոտայում որոշակիորեն արտահայտվում էր Սովետական Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ։ Հիշատակելով Թուրքահայաստանին, Քրդստանին, Լազիստանին, Բաթումի մարզին ու Արևելյան Թրակիային իրենց բախտը անձամբ տնօրինելու առթիվ Քեմալի նամակում տրված խոստման մասին, Սովետական կառավարությունը ընդգծում էր, որ դրա տակ ինքը «բնականաբար ենթադրում է այդ տեղերում ազատ հանրաքվեի անցկացում՝ գաղթականների և վտարանդիների մասնակցությամբ, որոնք իր ժամանակին իրենցից անկախ պատճառներով ստիպված են եղել թողնել իրենց հայրենիքը և որոնք պետք է վերադարձվեն հայրենիք»[26]։ Դրանով իսկ Սովետական կառավարությունը պարզորոշ կերպով հասկացնել էր տալիս, որ հիշված շրջանների հետագա ճակատագիրը կորոշի ինքը ժողովուրդը՝ խաղաղ ճանապարհով, առանց կողմնակի միջամտության։ Իսկ Չիչերինի 1920 թ. հուլիսի 19-ի հեռագրում՝ դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին՝ բանակցությունների հարցի առթիվ ասվում էր, որ «բացառապես Սովետական կառավարության խաղաղասիրական ձգտումների ազդեցության տակ թուրք նացիոնալիստները դադարեցրին իրենց սկսած զորակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին... Սովետական Ռուսաստանը կշարունակի ընթանալ ամեն մի ազգության աշխատավոր մասսաների նկատմամբ անաչառ բարեկամական վերաբերմունքի այդ ուղիով և հայ ժողովուրդը կարող է հույս դնել նրա մշտական բարեկամական վերաբերմունքի ու նրա ուժերի սահմաններում՝ նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար...»[27]։

Սովետական կառավարության գրված որոշակի և հաստատուն դիրքն այս հարցում ստիպեց Անկարայի ղեկավար շրջաններին հետաձգելու Հայաստանի վրա նախապատրաստվող հարձակումը։ Դա պարզորոշ երևում է սան Մուստաֆա Քեմալի՝ Ազգային Մեծ ժողովում արտասանած ճառից, որտեղ նա մեջլիսի անդամներին իրազեկ պահելով վերը հիշատակված նոտայի մասին, ընդգծել էր, որ Սովետական կառավարությունը վճռականորեն դեմ է թուրքա-

---

[25] Cemal Kutay, Նշվ. աշխ., էջ 27։

[26] «Документы внешней политики СССР», т. 2, стр. 555. Госполитиздат, М., 1958.

[27] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1960, էջ 353։

կան զորքերի հարձակմանը Հայաստանի վրա և այդ պատճառով իրենք հունիսի 20-ին ստիպված եղան որոշում ընդունել դադարեցնելու Արևելյան բանակի հարձակողական գործողությունների նախապատրաստումը[28]։

Ինչ վերաբերում է Հայաստանը նվաճելու հնարավորությանը,—ասել է նույն ճառում Քեմալը,—այդ հարցը չի կարելի դիտել մեկուսացված։ «Հայաստանի հետ հարաբերությունները կազմում են Արևելքում ընդհանուր վիճակի և Թուրքիայի՝ բոլշևիկյան կառավարության հետ ունեցած ընդհանուր փոխհարաբերությունների փոքր մասը, մի կողմը միայն»[29]։

Սովետական Ռուսաստանի միջնորդությունն ընդունելով՝ քեմալական կառավարությունը համաձայնվեց հատուկ պատվիրակություն ուղարկել Մոսկվա, նպատակ ունենալով ցույց տալ, թե ինքը իբր կողմնակից է վիճելի տերիտորիալ հարցերը խաղաղ ճանապարհով կարգավորելու։ Իրականում սակայն քեմալականները երբեք չեն հրաժարվել իրենց ագրեսիվ մտադրություններից, նրանք միայն սպասում էին հարմար առիթի, իրենց վաղօրոք ծրագրած պլանները իրականացնելու համար։

1920 թ. հուլիսի 19-ին թուրքական պատվիրակությունը Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ ժամանեց Մոսկվա։ Պատվիրակությունը մի շարք հանդիպումներ ունեցավ ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինի և նրա տեղակալ Լ. Մ. Կարախանի հետ, ինչպես նաև ընդունվեց Վ. Ի. Լենինի կողմից։ Այդ հանդիպումների և բանակցությունների ժամանակ պարզվեց, որ թուրքական կառավարությունը մտադիր չէ հետևելու իր կողմից նախկինում որպես հիմք ընդունած սկզբունքներին՝ տերիտորիալ հարցերի վերաբերյալ։

Ինչպես հայտնի է, 1920 թ. ապրիլի 26-ի Քեմալի նամակում հռչակվում էին Թուրքիայի կառավարության արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները, այդ թվում՝

Թուրքական պետության մեջ միայն անվիճելի թուրքական տերիտորիաների ընդգրկում.

Թուրքահայաստանին և խառը ազգաբնակչություն ունեցող այլ տերիտորիաներին ազգային ինքնորոշման իրավունքի վերապահում և այլն[30]։

Վերոհիշյալ սկզբունքները հիմք ընդունելով՝ Սովետական Ռուսաստանի կառավարությունը Մոսկվայի բանակցությունների ժամանակ առաջ քաշեց ազգագրական սահմանի սկզբունքը՝ հիմնված մինչև համաշխարհային պատերազմը գոյություն ունեցող ազգային փոխհարաբերությունների վրա։ Ելնելով դրանից՝ Սովետական կառավարությունը բանակցությունների ընթացքում պահանջում էր «հին թուրքական սահմանի այնպիսի փոփոխում (ռեկտիֆիկացիա), որի հետևանքով մի կողմից մահմեդական բնակչությամբ գերակշռող հողերը անցնեն Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թիվը եղել է հայկական մեծամասնություն՝ անցնեն Հայաստանին»[31]։

Թուրքական կառավարող շրջանները, սակայն, հակառակ վերևում հիշված իրենց երկերեսանի դիրքի ու դեմագոգիական սկզբունքների, և ղեկա-

---

[28] Atatürkün soviev ve demeçleri. Cilt I. s. 90.

[29] Նույն տեղում, էջ 89—90։

[30] Մանրամասն տե՛ս «Документы внешней политики СССР», т. II, стр. 725.

[31] Տե՛ս նույն տեղում, էջ 726—727։

վարվելով ողջ Հայաստանի նկատմամբ նվաճողական ձգտումներով, հրաժարվեցին Սովետական կառավարության արդարացի առաջարկներից և դրանով իսկ Մոսկվայի բանակցությունները ձախողման հասցրեցին։

Մոսկվայի բանակցություններին մասնակցած թուրքական պատվիրակության անդամներից մեկը, հետագայում Սովետական Ռուսաստանում քեմալական Թուրքիայի առաջին դեսպան Ալի Ֆուաթ Ջեբեսոյը, 1955 թվականին հրատարակած իր «Մոսկովյան հուշերում» խոսելով 1920 թ. բանակցությունների մասին, փորձում է քողարկել Անկարայի կառավարության ագրեսիվ պլանները և իրերի վիճակն այնպես ներկայացնել, որ իբր վերջինիս տերիտորիալ պահանջները միանգամայն օրինական էին և վերաբերում էին զուտ թուրքական հողերին։

«Անկարայի կառավարությունը,—փարիսեցիորեն գրում է Ջեբեսոյը,—չուներ որևէ թշնամական մտադրություն իր հարևան երկրների նկատմամբ և չէր հետապնդում այլ նպատակ, քան իր անկախության և ազատության հասնելը՝ ազգային սահմանների շրջանակներում» (ընդգծումը մերն է—Ե. Ս., Ռ. Ս.)[32]։

Թուրք հեղինակները, նենդափոխելով փաստերը, Սովետական Ռուսաստանի կառավարությանը մեղադրում են Մոսկվայի բանակցությունները ձախողելու մեջ։

«1920 թ. օգոստոսի 24-ին ստորագրված Մոսկվայի բարեկամության նախնական համաձայնագրի չստորագրման հիմնական պատճառն այն էր, որ Սովետները նպատակադրվել էին մեր արևելյան վիլայեթների հողերը տալ դաշնակցական հայերին»—գրում է Թեվֆիկ Բիյիքլիօղլուն[33] (ընդգծումը մերն է—Ե. Ս., Ռ. Ս.)։

Պետք է ասել, որ նույն այս հեղինակը իր հոդվածում ֆալսիֆիկացիայի ենթարկելով պատմական դեպքերը, փորձում է արդարացնել քեմալականների 1920 թ. աշնան արշավանքը Հայաստան, ներկայացնելով այն որպես խաղաղասիրական մի քայլ։ «1920 թվականի սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին դաշնակցական Հայաստանի դեմ սկսած մեր կարճատև ռազմական գործողությունները նպատակ ունեին այդ շրջանում խաղաղություն ու անդորրություն հաստատել և մեր «ազգային ուխտը» իրականացնել»[34]։

Այդ հարձակման նպատակը, սակայն, ինչպես ցույց տրվեց վերևում, միանգամայն այլ էր։

Անդրկովկասի և հատկապես Հայաստանի նկատմամբ քեմալականների ունեցած նվաճողական պլանները հայտնի էին Սովետական Ռուսաստանի կառավարությանը, որն իր միջամտությամբ աշխատում էր կանխել դեպքերի դեպի պատերազմ տանող ընթացքը։

1920 թվականի սեպտեմբերի 24-ին դաշնակցական ջոկատները Օլթիի շրջանում հարձակվեցին թուրքական զորամասերի վրա՝ այդ շրջանը հետ վերցնելու նպատակով։ Պետք է նշել, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հայկական մի շարք տերիտորիաների հետ միասին Օլթիի շրջանը ևս անցնում էր Թուրքիային։ Սակայն հայտնի է, որ Բրեստ-Լիտովսկի կողոպտիչ պայմանագիրը

---

[32] Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları, s. 90—91.
[33] Belleten, Temmuz, 1961, s. 479.
[34] Նույն տեղում, էջ 489։

ՌՍՖՍՌ կառավարության 1918 թվականի սեպտեմբերի 20-ի նոտայով[35] չեղյալ հայտարարվեց, ուստի Թուրքիան պարտավոր էր այդ շրջանը մաքրելու իր զորքերից։ Մինչդեռ Թուրքիան ոչ միայն մտադիր չէր Հայաստանին վերադարձնելու հիշյալ տերիտորիան, այլև ինքն էր պատրվակ փնտրում կռիվը վերսկսելու համար։ Օգտագործելով ստեղծված հարմար առիթը, Կարաբեքիրի բանակը հոկտեմբերի 28-ին անցավ հարձակման և կարճ ժամանակում գրավեց Հայաստանի տերիտորիայի մեծ մասը։ Սովետական Ռուսաստանը նորից փորձեց միջամտել այդ խայտառակ պատերազմին վերջ տալու և Հայաստանը վերջնական կործանումից փրկելու համար։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը պատրաստ էր նույնիսկ զինված օգնություն ցույց տալ Հայաստանին։ Եթե դաշնակ կառավարողները համաձայնվեին ստանալու այդ օգնությունը, հայ ժողովուրդը կխուսափեր տասնյակ հազարավոր նոր զոհերից և նոր տերիտորիալ կորուստներից։ Հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակները, սակայն, գերադասեցին համաձայնության գալու Թուրք զավթիչների հետ՝ հույս ունենալով վերջիններիս օգնությամբ մի փոքր երկարաձգել իրենց արյունոտ տիրապետությունը։

Ինչպես հայտնի է, 1920 թվականին Հայաստանի վրա կատարված Թուրքական արշավանքը ավարտվեց դաշնակների պարտությամբ և Ալեքսանդրապոլի ստրկացուցիչ պայմանագրով։ Թուրք հեղինակները հատուկ պարծենկոտությամբ այն համարում են իրենց «ազգային կառավարության կնքած առաջին պայմանագիրը», «մոռանալով»՝ նախ հիշեցնել իրենց ընթերցողներին, որ այդ պայմանագիրը, կնքված լինելով արդեն տապալված դաշնակցական կառավարության հետ, իրավական ուժ չուներ և հետո, այն, որ Թուրքիային չհաջողվեց կյանքում կիրառել պայմանագրի կողոպտիչ կետերը՝ շնորհիվ Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ՌՍՖՍՌ կառավարության գրված վճռական դիրքի, որի հետևանքով Ալեքսանդրապոլի պայմանագիրը չճանաչվեց ոչ Սովետական Հայաստանի, ոչ էլ Սովետական Ռուսաստանի կառավարության կողմից և Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով չեղյալ հայտարարվեց։

Կեղծելով պատմական ճշմարտությունը, Թուրք հեղինակներից Թահսին Յունալը գրում է, որ «Գյումրիի պայմանագրին հետևեցին Մոսկվայի և Կարսի պայմանագրերը»[36]։ Դեռ ավելին։ Ջանալով քողարկել Ալեքսանդրապոլի պայմանագրի զավթողական բնույթը, որի համաձայն, ինչպես հայտնի է, Հայաստանի տերիտորիան սահմանափակվում էր Երևանի ու Սևանա լճի շրջաններով, հեղինակը կանգ չի առնում պատմական հայտնի փաստաթղթերը կեղծելու առաջ։ «Գյումրիի պայմանագրով,—գրում է Յունալը,—հայերը ստիպված եղան հրաժարվել մեր օգտին Օսմանյան կայսրության կողմից 1878 թվականին կորցրած մեր նողերից»[37] (ընդգծումը մերն է—Ն. Ս., Ռ. Ս.)։

Ըստ հեղինակի, Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիային պետք է անցներին 1878 թվականի Բեռլինի պայմանագրի համաձայն Ռուսաստանին միացած տերիտորիաները միայն, այսինքն Կարսի և Արդահանի շրջանները։

---

35 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. I, стр. 490—492.

36 Tahsin Ünal, Նշվ. աշխ., էջ 270։

37 Նույն տեղում։

Սա բացահայտ ֆալսիֆիկացիա է։ Նախ, հիշյալ շրջանները Հայաստանի անբաժան մասը կազմող նրա պատմական տերիտորիաներն են, որը Թուրք հեղինակները լկտիորեն անվանում են Թուրքական հողեր[38]։ Եվ հետո, Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիան զավթում էր ոչ միայն վերոհիշյալ հայկական հողերը, այլև Արևելյան Հայաստանի մեջ մտնող ուրիշ տերիտորիաներ[39]։

* * *

Այսպես ուրեմն, Թուրք հեղինակների վերջերս հրատարակած աշխատություններում բարձրացվող այն հարցերը, որոնց մենք անդրադարձանք հոդվածում, նպատակ ունեն պատմական հանրահայտ փաստերի նենգափոխման միջոցով, 1920 թվականի Թուրքական ագրեսիան Անդրկովկասում ներկայացնել որպես Թուրք ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի բաղկացուցիչ մասը, իսկ այդ ագրեսիայի հետևանքով Թուրքիային անցած տերիտորիաները՝ որպես բուն Թուրքական հողեր։ Թուրք պատմաբանների աշխատությունների մյուս հիմնական նպատակը հակասովետական պրոպագանդան է, որը մինչև վերջը ներծծված է պանթուրքիզմի ռեակցիոն գաղափարներով։ Պանթուրքիզմը մեր օրերում էլ չի դադարում ծառայել որպես զենք Թուրքիայի կառավարող շրջանների ձեռքում՝ արտաքին քաղաքականության ասպարեզում նրանց հետապնդած զավթողական պլանների իրագործման ճանապարհին։ Այդ մասին է վկայում 1955 թ. մարտին Թուրքական կառավարության գիտությամբ Ստամբուլում հրավիրված Թուրք վտարանդիների և վերաբնակիչների այսպես կոչված առաջին կոնգրեսը, որտեղ ելույթ ունեցողները կոչ էին անում ընդարձակել Թուրքական աշխարհի սահմանները՝ «ազատագրելով Թուրքիայից դուրս բնակվող Թուրք եղբայրներին»։ Կոնգրեսի մասնակիցները «մեծ Թուրքիայի» սահմանների մեջ մտցրին Կովկասը, Միջին Ասիան, Պովոլժյեն և այն տերիտորիաները, որոնք բնակեցված են Թուրքալեզու ժողովուրդներով։ Հատկանշական է, որ Կոնգրեսի մասնակիցները իրենց ֆեդերացիայի պատվավոր նախագահ ընտրեցին Թուրքիայի այն ժամանակվա պրեմիեր մինիստր Մենդերեսին[40]։

Այսպիսով, պանթուրքիզմը, որպես ագրեսիայի զենք, ներկայումս էլ շարունակում է մնալ Թուրք ռեակցիոներների զինանոցում, ուստի պատահական չէ, որ այն լայնորեն օգտագործվում է նաև ամերիկյան իմպերիալիստների կողմից՝ հակասովետական նպատակներով։

Սովետական պատմաբանների կարևոր խնդիրներից մեկն է՝ վերհանել ու մերկացնել Թուրք պատմագրության մեջ հիմնական ուղղություն հանդիսացող Թուրքիզմի ռեակցիոն ու ագրեսիվ գաղափարախոսությունը։

---

[38] Տե՛ս նաև „Belleten". Temmuz, 1961, s. 487.

[39] Պայմանագրի տեքստը տես «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 408—411։

[40] «Против фальсификации истории Востока». АН СССР, Институт Народов Азии. Издательство восточной литературы. М., 1961, стр. 98.